

ԵՐԵՎԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ
«ՎԵՐՆԱՏՈՒՆ» ԹՈՒՄԱՆՅԱՆԱԳԻՏԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ

«ԹՈՒՄԱՆՅԱՆ - 145»

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻԶԲՈՒՀԱԿԱՆ
ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ
ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 145-ԱՄՅԱԿԻՆ
(6-7-ը մայիսի 2014 թ.)

Զեկուցումների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
Հյուսիսային համալսարանի
հրատարակչություն
2015

Տպագրվում է Հյուսիսային համալսարանի գիտական
խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Բորիս Մակիչան (նախագահ),
Սուսաննա Հովհաննիսյան, Գրիգոր Ասատրյան, Լիլիթ
Զաքարյան, Գայանե Հակոբյան, Գառնիկ Շախկյան

Պատասխանատու խմբագիր՝

Սուսաննա Հովհաննիսյան

Թումանյան - 145: Հովհաննես Թումանյանի 145-ամյա հոբելյանին նվիրված հանրապետական միջբուհական գիտաժողովի (6-7 մայիսի 2014թ.) զեկուցումների ժողովածու.:

Կազմող, խմբագիր և ներածության հեղինակ Ս.Գ.Հովհաննիսյան.-Եր.: «Հյուսիսային համալսարան» հրատ., 2015 - էջ:

Սույն ժողովածուն բովանդակում է ավելի քան երկու տասնյակ հետազոտողների՝ այդ թվում նաև ուսանողների հոդվածներ և ուսումնասիրություններ՝ նվիրված Թումանյանի կյանքի ու գործի, թումանյանագիտության, գրողի երկերի դասավանդման մեթոդիկայի և բազմաթիվ այլ հիմնախնդիրներին: Ձեռնդրվել են նաև բանաստեղծի քառյակների անգլերեն և տողացի թարգմանություններ:

Նախատեսված է հայագետների, գրականագետների թումանյանագետների և Հովհաննես Թումանյանի կյանքով ու ստեղծագործությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ

ԳՄԴ

«Վերնատուն» թումանյանագիտական կենտրոն
«Հյուսիսային համալսարան» հրատ. 2015թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք

Հովհաննիսյան Սուսաննա

Առաջաբան.....

Մակիջյան Բորիս

Բացման խոսք.. .. .

Աբրահամյան Աստղիկ

Ծննդավայրի կանչը Թումայանի

ստեղծագործություններում

Ասատրյան Ծովինար

«Հազարան բլրուլ» և «Կապույտ թռչուն». գուգադրական
վերլուծություն

Ավանեսյան Արմեն

Գիտական կենսագրություն, որին սպասում էին ավելի քան
կես դար (Սուսաննա Հովհաննիսյանի «Հովհաննես
Թումանյանի կյանքի և ստեղծագործության
պատմությունը» աշխատությունը).....

Բալայան Նաիրա

Թումանյանը սփյուռքի մամուլում

Դավթյան Վարդուհի

Թումայանը Հակոբ Օջականի գնահատությունների

համատեքստում

Դերիկյան Վարդան
**Թռչնային փոխակերպումներով ավանդությունների
թումանյանական մշակումները**

Երիցյան Սերգո
**Թումանյանի հրապրակախոսությունը և
արդիականությունը.**

Զաքարյան Անուշավան
**«Համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած
վնասների քննիչ հանձնաժողովի» գործունեության շուրջ**

Իսկանդարյան Նաիրա
**Իր ամբողջ գործին նկարագիրն է ազնուական բարութիւն
ւր**

Լոռյան Արմենուհի
Թումանյանը ընթերցողի անձնական ընկալումներում

Կարապետյան Լեյլի
Մեծ անտառից գատված.....

Հակոբյան Գայանե
**ՓիԱր տեխնոլոգիաները Թումանյանի «Քաջ Նազար»
հեքիաթում**

Սուսաննա Հովհաննիսյան
**Առաջին աշխարհամրտի թումանյանական
արձագանքները.....**

Մկրտչյան Նունե
Դպրոցի և ուսուցչի դերը Թումանյանի ընկալումներում

Մնացականյան Եվա
Թումայանի 1903թ.«Բանաստեղծություններ» ժողովածուն
ժաանակի քննադատության գնահատմամբ

Մուրադյան Սուրեն

Շախկյան Գառնիկ
Թումանյանի հայրենագիտական ժառանգությունը

Ջանփոլադյան Մագդա
Թումանյանի «Շունն ու կատուն» բալլադի Մարշակի
կատարած ռուսերեն թարգմանության պատմությունից

Սուքիասյան Համո
Թումանյանի ծննդյան 60-ամյակի
տոնակատարությունները Խորհրդային Հայաստանում

Հայկուհի

Ուսանողական Թումանյանական ընթերցումներ

Ադելյան Ալինա
Թումանյանական թեմաները «Սովետական Հայաստան» և
«Ավանգարդ» պարբերականներում

Թումանյան Սաթենիկ
Թումանյանի կյանքի ու գործունեության արտացոլումը
«Գարուն» ամսագրում.....

Կարապետյան Սաթենիկ
թումայանի բանահյուսական հարցերին նվիրված
բանավիճային հոդվածները

Մարգարյան Գոհար
Ամենամեծ մանկագիրը ժամանակակից մանկագրի
աշխարհում.....

Շահագիզյան Արուսյակ
Հովհաննես Թումանյանը երաժշտության մեջ

Տողացի թարգմանություններ

Սրապյան Նունե

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հյուսիսային համալսարանում 2014 թվականը հռչակվեց թումանյանական տարի: Ամենայն հայոց քանաստեղծի 145-ամյակին նվիրված հոբելյանական տարին ազդարարող հանդիսության բացման խոսքում համալսարանի ռեկտոր Բորիս Մակիչյանը նշեց. «Թումանյանի անունն ու գործը թանկ են ու նվիրական Հյուսիսային համալսարանում: Մեր բուհում միշտ թևածում է թումանյանական ոգին, ձևավորվել ու արմատավորվել է նրա պաշտամունքը: Բուհի ստեղծման առաջին իսկ օրվանից, ի թիվս այլ առաջնահերթությունների, կարևորել ենք Ամենայն հայոց քանաստեղծի գրական ժառանգությունը, ազգանվեր գործունեությունն ու կյանքի հիշարժան դրվագները նոր սերնդին հասու դարձնելը, թումանյանական ոգով կրթելն ու դաստիարակելը»: Նույն օրը հանդես եկավ Սուսաննա Հովհաննիսյանը «Խորհրդանիշ գրող կամ հայ ժողովրդի գենետիկ կողմը» խորագրով զեկուցումով: Հրապարակվեց թումանյանական տարվա շրջանակներում կազմակերպված բազմաթիվ միջոցառումների ընթացքի և սպասվող նախաձեռնությունների մասին հաղորդումը: Ամփոփվեցին Թումանյանին նվիրված գեղարվեստական ստեղծագործությունների ուսանողական և թումանյանական թեմաներով շարադրությունների, ասմունքի, կերպարվեստի հանրապետական դպրոցական մրցույթների արդյունքները: Հաղթողները Հյուսիսային համալսարանի ղեկավարության կողմից արժանացան խրախուսական և այլ մրցանակների՝ պատվոգրերի, հավաստագրերի և նվերների, ինչպես նաև դրամական պարգևների: Հյուսիսայինի բեմահարթակում մեկնարկեց թումանյանական թեմաներով բեմադրություններ ներկայացնող հանրապետության տարբեր դպրոցների թատերական խմբերի մրցույթը: Խորհրդանշական է, որ «Դերասանի վարպետություն» անվանակարգում հաղթեցին հենց քանաստեղծի անունը կրող թեվ 32 դպրոցի աշակերտները:

Հյուսիսային համալսարանի ղեկավարությունը հավուր պատշաճի գնահատելով հանրապետության մի շարք քաղաքական ու մշակույթի գործիչների, ինչպես նաև համալսարանի որոշ աշխատակիցների նվիրումն ու կազմակերպչական աշխատանքները թումանյանական միջոցառումների կայացման գործում և այլ ասպարեզներում, նրանց ունեցած ավանդի համար «Հովհաննես Թումանյան - 145» հուշամեդալով պարգևատրեց Երևանի գլխավոր ճարտարապետ Տիգրան Բարսեղյանին, Հյուսիսային համալսարանի պրոռեկտոր Գրիգոր Ասատրյանին, թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանին, համալսարանի Որակի ապահովման վարչության պետ Լիլիթ Ջաքարյանին, իսկ թումանյանական տարվա փակման օրը՝ 1915թ. փետտրվարի 19-ին, նաև գիրք նվիրելու հիշարժան օրվա առիթով «Հովհաննես Թումանյան - 145» հուշամեդալին արժանացան հասարակական-քաղաքական գործիչ, իրավաբան, պատմաբան, դիվանագետ Արա Պապյանը, մանկագիր Սուրեն Սուրադյանը և ՀՀ Գրողների միության նախագահ Էդվարդ Միլիտոնյանը:

Խորհրդային տարիներին գրեթե ամենամյա թումանյանական ընթերցումների սկիզբը դրել և շուրջ քառորդ դար ղեկավարել են բանաստեղծի կրտսեր դուստր, մասնագիտությամբ ճարտարապետ, Թումանյանի թանգարանի երկարամյա տնօրեն Թամար Թումանյանը և ակադեմիկոս, անվանի թումանյանագետ Էդուարդ Ջրբաշյանը: Խորհրդային կարգերի փլուզումից հետո այդ ավանդույթը մոռացության մատնվեց և առաջին անգամ վերականգնվեց Հյուսիսային համալսարանում. ավելի քան մեկ տասնամյակ է, ինչ այստեղ պարբերաբար տեղի են ունենում թումանյանական ընթերցումներ՝ անձամբ ռեկտոր Բորիս Մակիչյանի գործուն աջակցությամբ և «Վերնատուն» թումանյանական կենտրոնի ու նրա ղեկավար թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանի ջանքերով:

1914թ. մայիսի 6-7-ը հերթական անգամ տեղի ունեցան թումանյանական ընթերցումներ՝ հանրապետական միջբուհական գիտաժողով՝ այս անգամ նվիրված Հովհաննես Թումանյանի 145-ամյա հոբելյանին: Նախաձեռնողը վերստին Հյուսիսային համալսարանի ղեկավարությունն էր, «Վերնատուն» թումանյանագիտական կենտրոնը

և համլսարանի Հայոց լեզվի ու գրականության ամբիոնը: Մասնակցում էին ինչպես հանրապետության անվանի գրականագետներ ու մշակույթի գործիչներ, դասախոսներ և նույնիսկ գիտական ու հասարակական տարբեր ոլորտի գիտնականներ, այնպես էլ ուսանողներ՝ հանրապետության տարբեր բուհերից: Բացման խոսքով հանդես եկավ համլսարանի ռեկտոր Բորիս Մակիչյանը: Ողջույնի խոսքով հաղես եկան ՀՀ Գրողների միության նախագահ Էդուարդ Միլիտոնյանը, ՀՀ ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության և սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արտակ Դավթյանը, ՀՀ ԿԳ փոխնախարար, մանկ. գիտ. դոկ., Ռուսաստանի մանկավարժական և սոցիալական գիտությունների ակադեմիայի իսկական անդամ Մանուկ Մկրտչյանը և այլք:

Սույն ժողովածուն բովանդակում է ինչպես հանրապետական գիտաժողովի լիազումար, «Վերնատուն» կենտրոնի բաժանմունքի նիստերում ներկայացված զեկուցումները, այնպես էլ ուսանողական թումանյանական ընթերցումների նյութերը:

Թումանյանի 150-ամյակին ընդառաջ արդեն մի քանի տարի է, ինչ համալսարանի օտար լեզվի մասնագետների ուժերով կատարվում են բանաստեղծի երկերի տողացի թարգմանությունները անգլերեն, ֆրանսերեն և իսպաներեն լեզուներով: Ժողովածուում ներկայացվում են նաև բանաստեղծի քառյակների և այլ ստեղծագործությունների անգլերեն և իսպաներեն տողացի ու նաև որոշ զեղարվեստական թարգմանություններ:

Առաջաբան

Հայ ժողովրդի գենետիկ կոդը

Կան գրողներ, որոնց կենսապատումը նրանց ստեղծագործության լավագույն մեկնաբանությունն է, իսկ գեղարվեստական երկերը՝ կյանքի լավագույն արդարացումը:

Վ. Բելինսկու խոսքերով, այդպիսի գրողների առջև ժամանակը ծունկի է գալիս:

Այս առումով առանձնահատուկ ու բացառիկ է Հովհաննես Թումանյանը, որովհետև նա պատկանում է այն հանճարեղ արվեստագետների շարքին, որոնց ուժը բանաստեղծի և մարդու անբաժանելիության մեջ է, ազգայինի ու համամարդկայինի ներդաշնակ միասնության մեջ: Նա դարակազմիկ գրականություն է ստեղծել՝ վերացարկելով իր ժամանակն ու բոլոր ժամանակների մարդուն, հայ գրականությունը բերելով գեղարվեստական մտածողության բազմաձև շերտեր, տարածք ու ավանդույթ:

Թումանյանը ինքը հայ ժողովուրդն է, մեր ինքնաճանաչումը և գենետիկ կոդը, որը բացելու միջոցով կարելի է հասկանալ հայ մարդուն, նրա բնավորությունը, նրա անցյալն ու ապագան միաժամանակ:

Ֆրանսիացի գրականագետ Ժակ Նեֆը խոստովանում է. «Մենք չունենք այնպիսի գրող, որին դարձնենք ազգային խորհրդանիշ»: Մենք վստահ կարող ենք ասել, որ ունենք ազգային **խորհրդանիշ-գրող**: Թումանյանն է ամենաժողովրդական, ամենաազգային հայ գրողը, նա է **հայի ու հայկականության խորհրդանիշը**:

Թումանյանի մեծությունը զգում է յուրաքանչյուր հայ, որովհետև, ինչպես Պարույր Սևակը կասեր, նա «**մեր լավաշ հացն է**», ահա թե ինչու այն սերունդը, որն անգամ կարդալ չգիտեր, կամ նույնիսկ Թումանյանի անունը չէր լսել, մի բան հաստատ գիտեր, որ նրա ստեղծագործությունը անմահ է, ահա թե ինչու Սևակի մայրը նրան ասում էր. «Էդքան որ կարդում ես, գոնե էն «Գիքորը» գրողի պես մարդ դառնաս», իսկ Հրանտ

Մաթևոսյանի հայրը զարմանում էր, թե «Ինչո՞ւ, Թումանյան սովորո՞ւմ են»: Եվ նա յուրովի իրավացի էր, քանի որ չի կարելի սովորել այն, ինչ ազգը կրում է իր մեջ անհիշելի ժամանակներից, մեր առաջին աստվածների ծննդյան օրից, ինչ ամեն մի հայի արյան բաղադրության մեջ է, նրա հետ է ոչ միայն օրորոցից և ուղեկցում է մինչև խոր ծերություն, ինչպես ընդունված է ասել, այլ նրա մեջ է դեռ լույս աշխարհ չեկած: Վերջերս վաղամեռիկ հարազատի մահը սգալիս Ջարուհի անունով մի կին պատմում էր, թե ինչպես է հիվանդանոցում 30-ամյա մահամերձ քույրն ասել. «Գիտե՞ս, այնպես եմ մրսում, ոնց որ Գիքորն էր մրսում»: Ջարմանում ու ապշում ես, ինչպե՞ս կարելի է նկարագրել ֆիզիկական երևույթը, որ այն նույնպես դառնա խորհրդանիշ:

1904 թ. նամակներից մեկում գրողը խոստովանում է, որ անցավորը շատ վաղուց էր ընկել սրտից, իսկ անանցի հետ իր կապը համեստորեն լռության էր մատնում, քանի որ հոգին որոնումների մեջ էր և դեպի անհայտն ու անհունը իր ճանապարհին գտավ տիեզերքը՝ իբրև տուն: Ավելին, նա դարձավ հայ մարդու ներկայացուցիչը տիեզերքում, այն աստվածային ուխտագնացը, որը քայլում է մյուս ազգերի մեծագույնների հետ առաջին շարքերում. **«Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին»:** Եվ ասես դա քիչ էր, դարձավ **տիեզերքի տերը:** Տիրոջ իրավունքով էլ երկրում իր թողածով, իր երկերով ու պատգամներով ձգտում է թումանյանական աշխարհ բերել յուրաքանչյուրին, որ ապահովի նրանց բոլորի՝ ասել է թե մարդկության երթը դեպի վերը, մաքուրն ու տիեզերականը:

50-60-ականների հայ թե այլազգի գրական սերնդի լավագույն ներկայացուցիչները (Պ.Սևակ, Հ.Հովհաննիսյան, Գ.Էմին, Ս.Նարովչատով և այլք) Թումանյանի մասին իրենց խոսքը սկսում էին նրա տաղանդի ազգային որակի շեշտադրումով՝ նրան համեմատելով ուկրաինացի Շևչենկոյի, գերմանացի Գյոթեի, անգլիացի Շեքսպիրի կամ Բայրոնի, լեհ Միցկևիչի, վրաց Ռուսթավելու հետ, այսինքն՝ տարբեր ազգերի ամենամեծերի, ամենազգայինների, ամենահամարդկայինների ու ամենաժողովրդայինների հետ: Մաշվել են գուցե այդ խոսքերն ու համեմատությունները, սակայն հենց այդ խոսքերն են հաճախ արձանագրում մշտական իրողությունները, ինչպես որ առածներն ու

ասացվածքները: Ասել է, թե վաղուց է ամրագրվել Թումանյանի՝ հանճարի ազգային որակով պայմանավորված բացառիկությունը, **Պ.Սևակի** բնորոշմամբ՝ «անզուգականությունը» մեր գրականության ու մշակույթի պատմության մեջ. «**Եվ ամեն ազգ ունենում է այսպիսի միայն մե՛կ բանաստեղծ...նա կարող էր լինել նաև անանուն, նաև անթվագիր, ինչպես որ...էպոսները...ամենից ավելի հայոցը, ամենքից ավելի բնաշխարհիկը...բնությունը ամեն ինչ էր տվել նրան, որպեսզի մենք իր անվանը ածական դարձնեինք «սուրբը»...Նա անհատականացված ազգ էր...»:**

Անհնար է պատկերացնել հայ բազմադարյան գրականությունն ու հայ ժողովրդի ողջ պատմությունը առանց Թումանյանի: Նաև **համաշխարհային գրականության մեջ նա այն եզակի գրողներից է, որոնց կենսապատումը դառնում է դարաշրջանի կենսագրություն:** Համաշխարհային գրականության մեջ քանի՞ գրող գիտենք, որն այդքան բազմազբաղ լիներ հանրային կյանքի բոլոր ոլորտներում, միաժամանակ նախագահեր տասնյակ ընկերություններ (Հայ գրողների, Հայ որբախնամ, Հայկազյան ընկերություններ, Հայրենակցական միությունների միություն, Վշտապատում բյուրո, Հայ արվեստի տուն, ՀՕԿ և այլն և այլն), կատարեր քաղաքացիական սխրանքներ՝ բազում անգամ վտանգելով իր կյանքը: Այո՛, վիթխարի է նրա դերը հանրային կյանքի բոլոր ասպարեզներում: Նա հանճարեղ էր ամենուր, վաղուց է ասվել, ինչին ձեռք էր տալիս, արարում էր հրաշքը:

Այդ բացառիկությունը գրողի ստեղծագործական ու քաղաքացիական սխրանքի անբաժանելիության մեջ է, ինչն ապացուցվեց հենց նրա կյանքով՝ սկսած վերարկուն վաճառելուց ձեռք բերած գումարով Արևմտյան Հայաստանի ազատագրության համար հրացան գնելուց և 4-5 հայորդիներով թուրքական իշխանությունների դեմ դուրս գալու ռոմանտիկական ծրագրերից, մինչև ազգամիջյան բախումների, արյունահեղության դադարեցում, մինչև Առաջին աշխարհամարտի օրերին այցելություններ Արևմտահայաստան՝ ավերակների ու դիակների աշխարհ, մինչև Էջմիածին՝ որբերի ու գաղթականների խնամք, մինչև կարևոր, հաճախ կեղծ խոստումներով լի, երբեմն էլ արդյունավետ հանդիպումներ վրացի, ռուս, գերմանացի, իսպանացի և այլ ազգերի

դեսպանների ու հյուպատոսների հետ, գավառապետերի ու նահանգապետերի, ռուս գեներալների ու զինվորների, հայ կամավորների հետ, մինչև քաղաքացիական պատերազմը կանխելու անհաջող փորձ, մինչև չիրականացված գործուղում Ռուսաստան կայսր Նինկոլայ Երկրորդի մոտ, մինչև ՀՕԿ-ի առաջին նախագահի պաշտոն.... և սա բոլոր չէ... միայն թվարկելիս մարդու շունչը կտրվում է, թվում է, թե ամենքս էլ գիտենք, և ամոթ է, որ չիմանանք... նման վարքագիծը բացառիկ է՝ բնորոշ միայն նահատակության գնացող առաքյալներին: Նա ապրեց հույսերի ու հուսահատությունների, խանդավառության ու հիասթափությունների, հոգեկան վերելքների ու դառը պարտությունների, ապրելու ճիգերի ու հայրենագրկման իրականության մեջ և կարողացավ նույնիսկ ավերակների ու դիակների աշխարհում պահպանել իր լուսավոր իդեալները, մարդուն գազանից մարդ դարձնելու երազանքը, որն անկատար մնաց, ինչպես որ «Հազարան բլբուլը»:

Հիվանդ ու վատառողջ բանաստեղծը գերմարդկային ճիգերով էր հասնում ամեն տեղ ու նահատակվում ամենքի համար՝ դրանով իրականացնելով ինքն իրեն չզգալու երազանքը.

Բայց ո՞վ կըտա էն վայելքը՝ ինքըս ինձ էլ չըզգայի,

Ու հալվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի:

1915-ի սոսկալի ամիսներին քանի՛-քանիսը չանցան նույնիսկ Էջմիածնի կողքով, իսկ ոմանք էլ անկեղծ հայրենասիրությամբ նետվեցին այնտեղ՝ օգնելու, սակայն ֆիզիկապես չդիմացան դժոխային տեսարաններին, ինչպես, օրինակ, Մարտիրոս Սարյանը: Դեռ Սարյանի բախտը բերեց. վշտից ու ցավից նրա ուշագնացությունը, ո՞վ գիտի, գուցե բարեբախտություն էր ու փրկեց նրա կյանքը: Իսկ Արամ Մանուկյանին դա չհաջողվեց: Գաղթականների ու փախստականների ճամբարներն այցելելիս նա վարակվեց նրանցից ու վախճանվեց: Նույնը տեղի ունեցավ մեծահարուստ բարեգործ, մշակութային գործիչ, Երևանում «Ջանփոլադյանի թատրոնի» հիմնադիր Եսայի Ջանփոլադյանի հետ, ում շնորհիվ 1913-ին առաջին անգամ մեր մայրաքաղաքում

ներկայացվեց Արմեն Տիգրանյանի «Անուշ» օպերան: Նա որբերի խնամքով զբաղվելիս իր տանը նրանց ու բազմաթիվ գաղթականների ապաստան տալով՝ վարակվեց անբուժելի հիվանդությամբ և իր մահկանացուն կնքեց՝ որբ թողնելով անչափահաս իր երեխաներին:

Նահատակության գնացող բացառիկներից էր Թումանյանը, որ, ընդհատելով իր բուժումը, շտապեց Էջմիածնի դժոխքը ու ամիսներով մնաց այնտեղ, և դա էլ ասես քիչ էր, դատերն էր կողքին պահում, վտանգում հարազատ զավակի կյանքը: Սա արդեն հայերնասիրության ուրիշ, բացառիկ որակ է: Չափահաս բոլոր զավակներին գորավար Անդրանիկի տրամադրության տակ դնելը (չորս որդիներին՝ զինվոր, չորս դուստրերին՝ գթության քույր) անձնագոհություն չէ միայն, այլ գոհաբերության առավել բարձր որակ: Եղեռնի ահագարհուր տարիներին Թումանյանի բոլոր որդիները իրենց ազգային գործունեությունը ծավալեցին Արևմտյան Հայաստանում, պատերազմի թիկունքում և մարտի դաշտում, անձնագոհաբար կովեցին ու պայքարեցին հանուն Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության փրկության և նրանցից մեկը՝ 24-ամյա դրամատուրգ ու նկարիչ, թարգմանիչ Արտավազը՝ Վանի վերջին պարետը, 1918-ին դարձավ եղեռնի հերթական զոհերից մեկը՝ ընկնելով անհավասար մարտում դարավոր նենգ թշնամու սրից: Պտուղը ծառից հեռու չի ընկնում: Իսկ որդեկորույս հայրը, անփարատ վիշտը հոգում, պատնեշի վրա էր մինչև իր կյանքի վերջ, երբ չանսաց մեծ կանխազգացումով օժտված մոր նախազգուշացնող և աղերսական ձայնին ու համաձայնվեց մահացու ու անբուժելի հիվանդությամբ ծովը կտրել ու հասնել Պոլիս՝ դառնալու կամուրջ արևմտահայության բեկորների ու խորհրդահայ նոր երկրում ծվարած ժողովրդի համար, աջակցելու համայն հայությանը, որ գիտակցի իր միասնականությունը, բռունցքվի՝ ընդդեմ բոլոր թշնամիների: Մահկանացու Թումանյանը կառքի գալու պահին խորհում էր, թե երանի ոտքերը կոտրվեին ու չգնար, բայց հաղթում է անցավորի հետ իր կապերը խզած բանաստեղծը, ով ուզում էր վերջին շնչում անգամ օգտակար լինել իր ժողովրդին, որովհետև գիտեր, ինչպես կասեր Ս.Գորոդեցկին, իր մահվան օրը մեկնելու էր անմահություն:

Եթե Թումանյանը նույնիսկ գրող չլիներ, միևնույն է նա մնալու էր մեր ժողովրդի պատմության մեջ, քանի որ նա՝ է իր ժամանակի **լավագույն ազգային ու գրական գործիչը**, նա՝ է բոլոր ժամանակների լավագույն **հրապարակախոսներից** մեկը: Ինչպես գեղարվեստում, այնպես էլ այդ ասպարեզում, նրա իդեալը չարի վերջը տեսնելն էր: Այդ նպատակի համար նա ընտրել էր **ոչ թե սպանելու և ոչնչացնելու, այլ ուժ տալու ու կենդանացնելու ազնիվ**, այսօր կասեին «կոնստրուկտիվ» **ճանապարհը**. «Միայն մի բան կկամենայինք, որ վերանար ... բարբարոսական ադաթը մեր մամուլի միջից՝ տեղի տալով **անաչառ, վայելուչ քննադատության, լայն ու պայծառ հայացքին... և, փոխանակ սպանելու, քանդելու, ջլատելու, աշխատենք ուժ տալ ու կենդանացնել**» :

Թումանյանն էր արևելահայության «**լավագույն քննադատը**», անպետական երկրի պետական գործիչը, **ամենայն հայոց բանաստեղծը**, ով հայի հուզական աշխարհի, ստեղծագործ մտքի ու արթուն բանականության ներդաշնակ միասնությունն է, ով իրողությունն դարձրեց ամենքի հետ ու ամենքի համար **ապրելու իր նվիրական երազը՝ «Ու հավվեի, ծավալվեի, ամենքի հետ լինեի»**. ինքն իր համար այլևս գոյություն չուներ, դրա համար էլ երբեք չանիծեց և խավարի մեջ լո՛ւյս տեսավ ա՛յն կյանքում, որ միայն վիշտ ու ցավ էր տվել իրեն՝ թե՛ ազգային, թե՛ անձնական: Նա ողջակիզվեց, որ շատանա այդ լույսը.

Քանի՛ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լույս տրվել,
Լույս տալով եմ ըսպառվել:

Արդեն մեկ դար է, ինչ գրողի յուրաքանչյուր հոբելյան՝ անկախ նրանից՝ նշվում է ներքևից՝ առանց հրահանգների՝ ժողովրդի կողմից, թե վերևից՝ իշխանությունների անմիջական մասնակցությամբ կամ ուղղորդումով, դառնում է նրա ժողովրդականության վառ ապացույց: Նա այն երջանիկ արվեստագետն է, որի մեծությունը խոստովանել են մեր գրեթե բոլոր գրողները, ժամանակի բոլոր խոշոր

անհատներն ու ստեղծագործողները: Իհարկե, եղել են ժամանակներ թե՛ նրա ապրած օրերում և թե՛ նրանից հետո, երբ նրա պարզությունը շփոթել են պարզունակության հետ, սակայն Թումանյանն այն հազվադեպ գրողներից է, որի տաղանդը գիտակցվել է իր ժամանակակիցների, նույնիսկ թշնամիների կողմից. անգամ կույրին իր բնատուր գերզգացողությամբ հաճախ անտեսանելին տեսանելի է դառնում: Հատկապես մեր մեծերը, բոլորն առանց բացառության, առաջնության դափնին տվել են Թումանյանին, որովհետև իսկապես մեծ էին և չէին վախենում ամենամեծի հետ համեմատվելուց: Սա նույնպես հազվադեպ երևույթ է համաշխարհային գրականության մեջ: **Ավ.Բսահակյանը** սովորեցնում և զգուշացնում էր ապագա սերունդներին, որ Թումանյան-մարդուն շատ դժվար է հասկանալ, որովհետև նա «**հոգեբանական մի սֆինքս է...բարդ, անհագուրդ ֆաուստյան ոգին...**», «**անզուգական**» մարդ, որն ուր գնում էր՝ «**ուրախության արև էր իր հետ տանում, լույս ու կյանք տալիս**», «**ոչյութական մարդ**», ով «**առասպելական մարդկանց**» շարքում է, ում կողքին յուրաքանչյուրն իրեն երջանիկ է զգում, իսկ առանց նրա անիմաստ և ունայն է դառնում ողջ աշխարհը: **Չարենցի** համար նա Հումերի, Գյոթեի հետ բաժակ բարձրացրած «**Անհաս Արարատն էր մեր նոր քերթության**», իսկ **Տերյանը** նրա «Փարվանան» չէր փոխի հանկարծակի հեթանոսացած արևմտահայ ողջ գրականության հետ: Կարելի է այս շարքն անվերջ շարունակել, **Աղայան, Շիրվանզադե, Շանթ, Դեմիրճյան** և բազում այլ անուններ: Գուցե նրանցից ոմանք չափազանցնում էին, բայց ժամանակակցին ճնշադիր ակնածանքով մեծարելն ու նրա անառարկելի առավելությունն ընդունելը, իրոք, հազվադեպ երևույթ է, եթե ոչ բացառիկ: Նրանց պաշտամունքն ասես փոխանցվեց գրողների ու գրական հաջորդ սերնդին, որն ավելի առաջ անցավ՝ **աստվածացնելով** Թումանյանին, վստահ ենք այդպես է լինելու նաև հետագա դարերում, և եթե այսօր ոմանք լռում են, ուրեմն դեռևս չունեն իրենց մեծության գիտակցությունը, միայն մեծերն են խոստովանում Թումանյանի անառարկելի մեծությունը:

Այո՛, բոլորն են խորին ակնածանք զգացել նրա հանճարին հաղորդակցվելիս, շատերը նրան համարեցին միակն ու բացառիկը, անփոխարինելին: **Ստեփան Զորյանի**

խոսքերով. «Եթե մի օր աշխարհի բոլոր ժողովուրդների բանաստեղծությունների ցուցահանդես լինի, հայ ժողովուրդը ուրիշ ոչ ոքի չի կարող ուղարկել, բացի **Թումանյանից՝ իբրև օրինակ գտարյուն հայ բանաստեղծի**»:

Շատերը նրա մեծությունը տեսան ժողովրդին ձուլվելու և նրա հետ նույնանալու մեջ, ինչպես ասում էր **Հրաչյա Հովհաննիսյանը** «Թումանյանի ստեղծագործության ելակետը ժողովուրդն է և վերջակետը նույնպես»: **Միլվա Կապուտիկյանի** համար նա «**բնության ամենասքանչելի երևույթն**» էր՝ «լայն ու շռայլ բնավորությամբ, հոգու անսասան առողջությամբ, - հատկություններ, որ ունի միայն ժողովուրդը»: **Գևորգ Էմինի** համար նա այն «**հանապազօրյա հա՛ցն է**, առանց որի անկարելի է պատկերացնել մարդու գոյությունը...Մե՛ծ ու անհրաժե՛շտ,- **ամենի՛ց մեծն ու ամենի՛ց անհրաժեշտը**» (Ընդգծումը հեղինակինն է):

Համո Սահյանը խոստովանում է. «Ամեն անգամ նրա ստեղծագործական աշխարհի դուռը բացելիս ու ներս մտնելիս **գարմանում ու մոլորվում եմ ... Այս որքա՛ն գույներ, համեր, հուրեր, անդունդներ ու գագաթներ կան...Միշտ մի անճանաչելի բան**»: Թումանյանը նրա ամենասիրելի գրողն էր ողջ մոլորակի վրա: «Աշխարհի գրականությանն ու գրողներին շատից - քչից ծանոթ եմ...գիտեմ: **Բայց ամենից շատ սիրում և ամենից լավ ընկալում եմ Թումանյանին**»: Նույնն է խոստովանում նրա գրչակիցն ու սերնդակիցը՝ **Անահիտ Սահինյանը**. «**Թումանյանն ինձ համար մի կողմ, ողջ հայ գրականությունը մյուս կողմ, - ասում է նա և ավելացնում. - Ինձ համար աշխարհի մեծագույն գրողն է**: Հոդվածն ավարտում է Աստծո ու Թումանյանի միջև հավասարության նշան դնելով. «**Աստված երկնքում է, ու նաև մեր մեջ: Երկնքում ու նաև մեր մեջ, մեզանից անբաժան է Թումանյանը**»:

Իսկ որքան դիպուկ ու թումանյանական սեղմությամբ է բնութագրելել Մեծ լռեցուն նրա մեծ հայրենակիցը՝ **Հրանտ Մաթևոսյանը**. «**Թումանյանով մենք կանք: Առանց Թումանյանի մենք չկանք**»: Նա Թումանյանին աստվածացրել է՝ անվանելով «**Աստծո որդի**» և միաժամանակ «**Հայր աստված**», ով երկիր էր եկել ու դարձել իր ժողովրդի ողբերգուն, բայց ոչ «ատելության կաշկանդյալը...», և եզրակացրել. «Այդպես

միայն գորավար-արքաներն են լինում...Իր կատարելությունը կատարյալ դառնալու կարիք չի զգում... Նա իր ժողովրդի կատարելության խորհրդանիշն է»: Մաթևոսյանի խորին համոզմամբ յուրաքանչյուր հային վաղաժամոթ ու ամենամտերիմ այդ թագավորությունում՝ Թումանյանի աշխարհում են ծնունդ առնում մեր մշակույթի բոլոր մեծերը և այնտեղ լինելուց հետո միայն գալիս երկիր:

Ինքը՝ բանաստեղծն էլ գիտեր, որ իր համար տարածաժամանակային սահմաններ չկան, որ ապրելու է մինչև վախճանն անվախճանի և քննելու է նրա հետ գոյի գաղտնիքները.

Բարձրը է հընց աշխարհքն Հայոց ու Մասիսը երկնադետ.

Իմ խոր հոգին էն բարձունքին խոսք է բացել Նըրա հետ -

Անհաս բանից, ըսկզբանից, երբ չըկան էլ դեռ չըկար,

Մինչև վախճանն անվախճանի քընընում է դարեդար:

Հենց ինքն է ասել. **«Ռու Աստված ես, դու անհուն ես, անանուն ես, ու անես»:**

Թումանյանին բացառիկ ջերմությամբ են մեծարել նաև այլազգիները, այդ թվում՝ Վ.Բրյուսովը, Ս.Գորոդեցկին, Տ. Տաբիձեն, Գ.Լեոնիձեն, Ն. Տիխոնովը, Վ. Կոչևսկին, Ս.Շերվինսկին, Ալ.Դիմշիցը, Ա.Սուրկովը, Դ. Գրանինը, Լ.Պերվոմայսկին, Կ.Չուկովսկին, Կ.Գամսախուրդիան, Ի.Աբաշիձեն, Գ.Աբաշիձեն, Է. Մեժելայտիսը, Յու.Զբանացկին, Մ.Տանկը, Մ.Պետրովիխը, Բ.Ախմադովինան, Վ.Զվյագինցևան և այլք: Ռուս գրող Դ.Գրանինը Թումանյանի բացառիկությունը տեսավ հայ ժողովրդի մշակույթի ու արվեստի բոլոր հարակից բնագավառները չափազանց խորը թափանցելու մեջ, ուկրաինացի Ռ.Ֆեոդորովի կարծիքով «Թումանյանն է հայ ազգային բնավորության ներկայացուցիչը և պատմական կենսափորձի խտացումը»: Պոետի քերթվածներից շատ շատերը բնորոշվեցին իբրև «հոգու կանչ», «նվիրական աղոթք», «մոգական շշուկ»:

Պուշկին-Թումանյան զուգահեռի մասին խոսվել է միշտ՝ սկսած նրա ժամանակակիցներից՝ իշխանուհի Մարիամ Թումանյանից ու Վ.Տերյանից մինչև մեր

օրերը՝ Ն.Տիխոնով. («Թումանյանը Հայաստանի Պուշկինն է»), Սերգեյ Բարուզդին. («Խորհրդանիշ գրող է, ինչպես Պուշկինը»), անվանի թումանյանագետ Էդ. Ջրբաշյան, ով մի ամբողջ մենագրություն ունի այդ թեմայով, որով գիտականորեն մեկընդմիջտ ամրագրվեց Թումանյանի՝ Պուշկինի հոգևոր երկվորյակը լինելու իրողությունը:

Ապուլոն Գրիգորևը 1859 թ. իր «Հայացք Պուշկինի ստեղծագործության վրա նրա մահվան օրից» հոդվածում ասել է «Պուշկինը մեր ամեն ինչն է», որն այդ օրից դարձել է թևավոր արտահայտություն և անառարկելիորեն բնորոշում է նաև Թումանյանին: Եթե այդ խոսքը բնութագրում է Պուշկինին, ով հիմնականում արվեստում դարձավ ռուսական հոգու և ռուս մարդու բնավորության կրողն ու ներկայացուցիչը, ապա որքան այն սագում է Թումանյանին, ով ոչ միայն արվեստում այլև հասարակական կյանքի այլ, անհամեմատ ավելի շատ, գրեթե բոլոր ոլորտներում՝ հրապարակախոսություն, ազգային վիթխարի գործունեություն, ժողովրդական դիվանագիտություն, պատմագրություն, մշակութային կյանքի ղեկավարություն... դարձավ ազգային լավագույն ներկայացուցիչը, և ոչ թե որևէ գրող կամ քննադատ, այլ հենց ինքն իրեն անվանեց **ամենայն հայոց**, ու ժողովուրդը նույն վայրկյանից կառչեց այդ բնորոշումից՝ նրան հռչակելով «Ամենայն հայոց» բոլոր ասպարեզներում՝ բանաստեղծ, թամադա, որբերի հայրիկ և այլն: Երբ նրանից հետո եկան **Տերյանն ու Չարենցը** և կանխորոշեցին գրական զարգացման նոր ուղիներ, նրանց կողքին էր Թումանյանը: Նա նաև այսօրվա գրողների կողքին է՝ Սուրեն Մուրադյանից մինչև Էդուարդ Միլիտոնյան, բոլորի, անխտիր, անգամ նրանց, ովքեր կարող են մերժել ու չխոստովանել նրա մածությունը: Նա կլինի նաև հեռու հեռավոր դարերի գալիք սերունդների հայ հանճարի կողքին և կսովորեցնի ապրելու և արարելու արիություն:

Այո՛, Թումանյանը **մեր ամեն ինչն է**, նրա մեջ մեր **անցյալն է, ներկան ու ապագան**, մեր **ավանդույթներն ու ավանդախախտությունը**, նա և՛ **հողեղեն է**, և՛ **աննյութական**, նրա մեջ մեր **բնությունն է**, **հայոց բառ ու բանը**, մեր **հացն ու ջուրը**, **առօրեականը և տիեզերականը**, նա **կատարելության ու զոհաբերության խորհուրդն է**, **հայ ժողովրդի խիղճը**, **գուրն ու կարեկցանքը** և հեռացավ կյանքից իր ազգի համար անշեջ հուրը

վնտրելու ճանապարհին: Իր բնագրով ու «մերթ մուրթ ամպամած, մերթ մեղմ ու պայծառ» հոգու աչքերով էր տեսնում ու մեկնում անտեսանելին: Դեռ 28-ամյա պոետը «Տպավորություններ» քերթվածում գրում էր.

Ես հազար աչքով բաներ եմ տեսնում,
Որ թաքնված են լռության ետև,
Հազար ականջով ձայներ եմ լսում,
Որ դեռ սրտերում շշուկ են թեթև:

Հայրենագրված պոետի, որդեկորույս հոր, ամենայն հայոցի **«Խնդացող սխուր, սրտաբեկ ուրախ»** հոգին հաճախ է ճչացել վշտից ու ցավից, բայց նա ժպտացել է, շռայլորեն ժպիտ պարզել ամենքին և ամեն ինչ արել՝ ուրախացնելու համար նրանց. չէ՞ որ «Քեֆ անողին քեֆ չի պակսի» հեքիաթի հեղինակն էր, թեև իր հոգում պահված հայոց վշտի ծովը անհամեմատելի է իր հեքիաթի հերոսի ցավի հետ: Ամեն ինչ արել է՝ թաքցնելու հայոց վշտի մեծ ծովից ծնվող իր վիթխարի տառապանքն ու արցունքները, ու չի նկատել, որ բացի հարազատներից այն նկատել են ժամանակակիցներից մի քանիսը՝ Հ.Տեր-Միրաքյանը՝ Ղ.Աղայանի աճյունի մոտ, գլխության քույր Նվարդ Եգիբյան-Բաղդասարյանը՝ 1915թ. Էջմիածնում՝ դիակների սայլի մոտ, Տիգրան Հախումյանը՝ 1918թ. մայիսի 29-ին, երբ նա Սանահինի ձորով հայր Օհանի պես անօթևան գաղթականներին առաջնորդելիս նրանց անեկդոտներով ու սրամտություններով ուրախացնում ու նույնիսկ ծիծաղեցնում է «Էրեկլու բաղում», իսկ բոլորի քնելուց հետո նստում հեռավոր կոճղին ու մռայլվում:

Թումանյան... **«գարմանալի գարմանք»**, մի գերմարդ, որ հասնում էր ամենուր, ամենքի հետ ապրում ու ամենքի չափ տառապում, ինչպես ինքը կասեր Սայաթ-Նովայի մասին, հանճարի կնիքը ճակատին, ժողովրդի զգացմունքը սրտում, լույսը հոգու մեջ, պատմությունը թիկունքին, ապագան ու գալիքը՝ աչքի առաջ:

Ինչպես կարող է մեր ամեն ինչը չլինել մի պոետ, որի մասին վաղուց ասված է, որ մեր **«ոգու Աստվածաշունչն է ու մեր կյանքի հանրագիտարանը»** (Նարովչատով):

Թումանյանը **մեր ամեն ինչն է**, քանի որ նրա պոեզիայում կան մեր անցյալի ու իր ապրած օրերի հայ մարդու մոլեգնող զգացմունքների փոթորիկներն ու ապագայի բազում-բազում հորիզոնները միաժամանակ: Նա եկել էր իբրև **առաջնորդ, նահապետ, գորավար ու զինվոր**, իբրև **մարտիկ** հեղեղի նման հայության վրա թափվող զարհուրանքների դեմ, եկել էր մեղմացնելու նրա վիշտն ու տառապանքը, եկել էր իբրև **բժիշկ** դարմանելու Հայաստանի չապաքինվող վերքերը, բալասան դառնալու ու պահելու ազգի հինավուրց հավատն ու ապագայի հույսերը: Անգիր գիտեր ու մեզ զգուշացրել է, որ **«Չարն էլ է միշտ ապրում անմեռ»**, դրա համար էլ չարի ու բարու սահմանին կանգնած **սահմանապահն էր նա**, որ պաշտպաներ բարուն չարի ոտնձգություններից և թույլ չտար, որ բարին ու լավը գայթակղվի ու անցնի սահմանը, հայտնվի հակառակ կողմում, թույլ չտար, որ մյուս կողմից էլ սահմանն անցնի տկար լավին հաղթած վես տմարդին և անարգել հայտնվի գեղեցիկ երագների աշխարհում: **Իմաստուն պատմգամախոսն էր** դարերի և զգուշացնում էր անողոք իշխողներին և իրենց անպարտելի, ամենազոր հորջորջողներին. **«Միշտ ուժեղից ուժեղը կա, Իսկ ամենից ուժեղը՝ մահ»** («Հսկան»): **Աշակերտն էր** հայրենի հողի, բնության ու ժողովրդի, և լավ էր սերտել իր ուսուցիչների սովորեցրած դասը. սերը, վիշտն ու արցունքը սրտում ժպտացել էր ամենքին: Շատերին էին դասավանդել այդ ուսուցիչները, բայց շատ քչերին, բացառիկներին է հաջողվել յուրացնել այդ դասերը, ինչպես Մեծ լոռեցին էր ասում՝ ծաղիկը դրված է մեջտեղը, բայց միայն մեղուն է նրանից մեղր քաշում: Գազան-մարդու իշխանության տակ հեծող թույնով ու մադձով լի դարում նա մեղր էր քաշում, որպեսզի լույսով հաղթեր խավարին ու բարությանը՝ չարին («Ո՞նց էր համը իմ ձագի»):

Մեր բազմադարյան պատմության **մեծերի մեծն էր**: Անհիշելի ժամանակներից նա միշտ **եղել է մեր բոլոր մեծերի կողքին՝** և՛ երբ կովում էին Բելի դեմ, և՛ երբ Քրիստոնեություն էին ընդունում, և՛ երբ գրերն էին արարում, և՛ երբ ազգի ճակատագիրն էին որոշում, բոլոր նրանց կողքին, ովքեր մեր ազգային մշակույթն էին արարում ու

պատմությունը կերտում: Ահա թե ինչու նա մեր ամեն ինչն է, մեր Պուշկինն է ու մեր Շեքսպիրը, մեր Հայկն է ու Տրդատ Մեծը, մեր Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, մեր Օձնեցին է ու Խրիմյան Հայրիկը, մեր Խորենացին ու Նարեկացին, մեր Աբովյանն ու Կոմիտասը, մեր Սարյանն ու Անդրանիկը, Սիմոն Զավարյանն ու Գարեգին Նժդեհը, մեր հարազատ հողն է ու բնությունը, մեր պատմությունն է ու գիտությունը: Բայց սա դեռ բոլորը չէ:

Ամենից շատ Թումանյանն է բարձրաձայնել իր դառնացած ժողովրդի՝ ամբոխի վերածված գանգվածների թերություններն ու հոռի կողմերը, ամենից շատ նա է **«խալխին» նախատել** յուրաքանչյուր հանցավոր հայի համար, անխնա մեղադրել, որովհետև **«ծառիցն է ընկել պտուղը»**: Ամենից շատ նա է զայրույթի նետեր շռայլել խանդի ու նախանձի, չկամության ու սոցիալական, կեղծիքի ու ստի, բարոյական ոճիրների դեմ:

Համարձակվել է ասել. **«Ճշմարիտն էն է, որ մեր ամբողջությունը տառապում է մի ծանր ու խոր բարոյական հիվանդությունով...մեր հոգին շատ է դառնացած, մեր ներքին մարդը շատ է փչացած»** և իբրև բուժում առաջարկել **«աշխարհքի առաջ»** անկեղծ խոստովանությունը, ապաշխարանքը...**«Ուրիշ ճանապարհ չկա. ներսից է լինելու հաստատ փրկությունը, որովհետև ներսից ենք փչացած»**:

Եվ հենց սրանով նա դարձել է մեր **դատախազը, դատավորն ու պաշտպանը** միաժամանակ, մեր **առաքիչությունն** ու Ա.Ֆետի խոսքերով **«ազնվականության վկայականը»**, մեր հասարակական **հիվանդություններն ախտորոշողն ու դրանք բուժելու, ապրելու ու հարատևելու դեղատոմսեր առաջարկողը**: Ընդ որում, մարդկության մեծ ընտանիքում նա պաշտպանում էր թե՛ մեզ մեզանից ու մեր սխալներից, և թե՛ անխիղճ օտարից, վերջինիս՝ մեզ ծնկի բերելու մշտական հարձակումներից: Այսօր էլ Թումանյանի Մասունցի Դավթի շուրթերից հնչող սպառնալիքն ու իմաստուն խոսքերը պետք է հասանելի դառնան թե՛ մեր յուրաքանչյուր թշնամուն, պատերազմներ սանձազերծող ամեն մի իշխանավորի. թե՛ մեր զինվորին, զորավարին ու քաղաքական,

այսօր նաև պետական գործչին, ովքեր այսպես պիտի պատասխանեն մեր դարավոր
նստիսի բոլոր սպառնալիքներին.

Հորում լինեն, քառսուն զազ խոր,
Թե ջաղացի քարի տակին,
Կելնեն ձեր դեմ, ինչպես էսօր
Սասմա Դավիթ, Թուր- Կայծակին:
Էն ժամանակ աստված գիտի,
Ով մեզանից կրլի փոշման.
Մե՞նք, որ կելնենք ահեղ մարտի,
Թե՞ դուք, որ մեզ արիք դուշման...

Հայ արվեստագետի հեղինակային իրավունքը պաշտպանելիս գրողը սահմանում
էր բարոյական օրենքներ, քանի որ դրանք բացակայում էին, իսկ եղածն էլ չէր գործում:
Ամոթանք էր տալիս այն օրենսդիրներին, որոնց ստեղծած օրենքների հիմքում
բարոյականի պաշտպանությունը չէր. «...Անարդարություն է... ինչ օրենքի անունով
ուզում է այդ կատարվի: **Օրենքներ կան, որոնցով ամոթ է օգտվել**»: Սոս Սարգսյանն
ասում էր «**Թումանյանը մեր դեռևս չգրված սահմանադրությունն է, մեր անձնագիրը
աշխարհի առջև**»: Եթե գրվի նոր՝ թումանյանական սահմանադրություն, այլևս չեն մնա
օրենքներ, որոնցից օգտվելն ամոթ լինի:

Այժմ էլ դժվարին ժամանակներ ենք ապրում, և այսօր նույնպես ինչպես միշտ
անհրաժեշտ է Թումանյանը օղի ու ջրի պես: Ամենայն հայոցի իր անխախտ իրավունքով
նա հիշեցնում է, որ որքան էլ մարմինը սպանեն, հայի ոգին ընկճելն անհնար է, որ
«Աշխարքում հաստատ մի բան կա մենակ, Այն է, որ հաստատ ոչ մի բան չկա», և եկել է
ժամանակը, որ ամենքը հավատան.

Բայց ի՞նչ անես որ... էսպես չի մընա...

...Բայց մեր աշխարհն էլ... Էսպես չի մընա...

Էսպես չի մնա, քանզի այլընտրանք չկա: Պարույր Սևակն ասում էր՝ ազգերը ոչ թե մեռնում, այլ ինքնասպան են լինում, և չտվորել Թումանյանից նշանակում է ինքնասպան լինել: Թումանյան ունեցող ազգը չի կարող ինքնասպան լինել...

Սուսաննա Հովհաննիսյան